



# Միսաք Մեծարեւնց

## Ուռիներու շուքին տակ

Ա

Ուռենիներ, լացէ՛ք, լացէ՛ք անդադրում  
Արտասուքնիդ շիթ շիթ հոգիս կ'արժաթէ.  
Ես կը փարիմ մենիկ պահին այս տրտում՝  
Ուր ձեր հեղուկ նրւագն յուշիկ կը կաթէ:

Ծաղիկներուն գօտին դեղին, լայնարձակ  
Արօտներու գիւմրիւթ իրանն երբ գրկէ,  
Ու միջօրի արեւն ալ՝ խտրձ ու տրցակ  
Շողերն իր՝ բիլ Ժապավէնով մը պրկէ,

Կուգան կոյսերն իմ անուրջիս, հերարձակ,  
Մանիշակէ բըլուրներէն ու դաշտէն,  
Ես կ'ունկնդրեմ հապըշտապ ու համարձակ  
Քայլերուն՝ որ լուռն ուժգնօրէն կը շեշտեն:

Ու կը պարե՛ն. իրենց նագանքն հարսենի  
Ու նայուածքնին քօղքած կազի մըշուշով,  
Իրենց վարսքին հետ կը խաղայ սիւզ մը գով  
Եւ այտերնին կակաջի պէս կը շիկնի:

Իրենց մարմինն՝ ակնվանի թափանցիկ.

Իրենց հոգին՝ համբոյր համակ ու շուշան,  
Իրենց սիրտը՝ հուր շրջնուլիկ ու բաղձիկ,  
Իրենց ծիծաղն՝ արշալոյս սը ջինջ գարնան:

Բ

Ուռնիներ՝ արտասուեցէ՛ք տրտմագին  
Գորովակաթ արցունքը ձեր արծաթէ.  
Քաղցր է ինձի գեղումն այդ ձեր թախժանքին՝  
Որ տրտմանոյ՝ կայլակներով կը կաթէ:

Տիանդորին համբուն՝ ժամերն են ոսկի,  
Ձեր սաղարթին գորշ ու տարփոտ շուքին տակ՝  
Ուր բուրնունքը կուգայ ծաղիկ ու հասկի  
Եւ կը հնչէ յուշերուս ծափը խայտակ:

Ուր սերթ ձայնն ալ թմբկիկներուն հեռաւոր,  
Ու ծիծաղը բամբիռներուն արծաթի,  
Ու գնջուի երգիչներու տարփաւոր  
Միրերգներուն արձագանգն ալ կը ցաթի:

Ու երբ դարձեալ հովիտն համակ ընդգրկէ  
Անդաստանին վայրի Լուռը թեւաւոր,  
Ու երբ ծառուտքն ալ արբեցած խոնջէնքէ  
Անշարժանայ իր խոկին սէջ մենաւոր:

Արագիլ սը կ'անցնի յանկարծ անվրդով,  
Յուցադրելով կարմիրն իրեն կտուցին  
Ու կը տաքնայ սէջն արեւին հուր ցանցին,  
Ու կը ցանէ հոս հոն կափկափն իր թոթով:

Գ

Ուռենիներ՝ր, շիթ շիթ արցունք ցողեցէք,  
Մինչ բուրմունքնիդ իմ հոգւոյս մէջ կ'ամպանայ,  
Եւ այս չքնաղ անդորրութեան յեց՝ թող հէք  
Երազանքս պահիկ մը գէթ հեշտանայ,

Եւ երբ իջնէ լեռնէն հովիկն իրիկուան,  
Ու սրսրփայ թախծոտ օրհներգը սօսին.  
Երբոր ցայտքերն աւազանին մէջ հոսին  
Ու ձեր շուքին տակ թռչնիկներ թռվրոան.

Ու երբ արեւն ալ քրքմաներկ վրձինով  
Ոսկեգօծէ սրգատամուկ ձեր հոգին,  
Երբ համբոյրի պէս փաթթրի ձեր շոգին  
Անոր ցուքին՝ եղկ, տարփագին ու գինով.

Միշտ, յամրագին կաթկըթեցէք դուք նորէն  
Արծաթելու համար խորհուրդն անպարփակ  
Որ շուքէ շուք կը թռչըտի լայնօրէն  
Ընդգրկելով ամէն դալար շրջափակ:

Ու երբ ցայգն ալ ծառաստանին մէջ սահի  
Մեւ մագիլով ձեր ջինջ հոգին ճանկելու,  
Լացէ՛ք նորէն, դուք համակերպ ու հրլու  
Դողդըղագին ձեր տազնապին մէջ սհի: